«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Երևանի պետական համալսարանի ռեկտոր,
պատմական գիտությունների դոկտոր

_____ Հ. Հովհաննիսյան

«24» Դեկտեմբեր 2024թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Քնարիկ Հրահատի Խաչատրյանի Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Եկամուտների և ծախսերի բյուջետավորման և վերահսկողության բարելավումը ՀՀ արտադրական կազմակերպություններում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Ֆինանսահաշվային ամբիոնի 2024 թվականի դեկտեմբերի 19-ին կայացած նիստում: Նիստին ներկա էին ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար տ.գ.թ. Գնել Սահակյանը (նախագահող), տ.գ.դ., պրոֆեսոր Վարդան Բոստանջյանը, տ.գ.թ., դոցենտ Թամարա Հովակիմյանը, տ.գ.թ., դոցենտ Գրիգոր Մնացականյանը, տ.գ.թ., դոցենտ Գևորգ Կիրակոսյանը, տ.գ.թ. Կարեն Սահակյանը, տ.գ.թ. Հասմիկ Դովլաթյանը, տ.գ.թ. Լինանա Կարապետյանը, դասախոս Մերի Փանոսյանը, ասպիրանտ Ծովինար Կլեկչյանը, նիստի քարտուղար Լիլիթ Ասրյանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

<u>ՀՀ արտադրական կազմակերպություններում եկամուտների և ծախսերի բյուջետավորման դերը և նշանակությունը</u>

ՀՀ արտադրական կազմակերպությունների մրցակցային դիրքերի ամրապնդմանն էապես կարող են նպաստել եկամուտների ու ծախսերի գծով բյուջետավորման հայեցակարգի մշակումն ու ներդնումը: Եկամուտների և ծախսերի բյուջետավորման պարագայում պարբերաբար վերանայվում և վերագնահատվում են արդեն իսկ կազմված նախահաշիվները, սահմանվում է վերահսկողություն դրանց նկատմամբ և մեծանում են համալիր հաշետվողականություն

իրականացնելու կազմակերպությունների հնարավորությունները: Նման մոտեցումը չափազանց կարևորվում է ժամանակակից շուկայական հարաբերություններում, քանի որ այն ոչ միայն նպաստում է կազմակերպության գործունության արդյունավետության բարձրացմանը, այլև՝ կառավարչական որոշումների ընդունման հիմնավորվածության ապահովմանը:

Արդիականությունը

Ատենախոսությունն իրենից ներկայացնում է ՀՀ արտադրական կազմակերպություններում եկամուտների ու ծախսերի բյուջետավորման և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ներդրման մեթոդական մոտեցումների, տեսական ու գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված հետազոտություն, որը ներառում է որոշակի առաջարկություններ՝ ուղղված կազմակերպություններում ֆինանսական պատասխանատվության համակարգի գործունեության արդյունավետության բարձացմանը և կայուն զարգացման գործառույթների հաշվետվողականության համալիրության ապահովմանը:

Կազմակերպությունների ֆինանսական արդյունքների վերահսկողության կատարելագործումը «բնապահպանական-սոցիալական-կառավարչական» գործոնների փոխներազդեցության համատեքստում առաջարկվում է իրականացնել տեղեկատվական ապահովման նոր լուծումների միջոցով, ինչը ենթադրում է ինտեգրված արդյունքներով հաշվետվողականության իրականացում: Արտադրական կազմակերպություններում նման պահանջի իրականացմանն անշուշտ կարող է նպաստել եկամուտների և ծախսերի բյուջետավորման հայեցակարգային նոր մոտեցումների մշակումը:

Թեմայի գիտական կարևորությունը

«Եկամուտերի և ծախսերի բյուջետավորման և վերահսկողության բարելավումը ՀՀ արտադրական կազմակերպություններում» թեմայով ատենախոսությանը ունի ակնհայտ գիտական արժեք, քանի որ այն հետապնդում է ՀՀ արտադրական կազմակերպություններում եկամուտների ու ծախսերի բյուջետավորման, դրանց հաշվառման, վերահսկողական ժամանակակից համակարգերի ներդրման հիմնախնդիրների բացահայտման և ուսումնասիրման,ինչպես նաև այդ ուղղությամբ անհրաժեշտ լուծումների իրականացման նպատակ:

Սպասվող արդյունքների գործնական նշանակությունը

Ատենախոսության արդյունքները կարող են ունենալ լայն գործնական կիրառություն, մասնավորապես՝

- նպաստել ՀՀ արտադրական կազմակերպություններում կառավարչական գործառույթների արդյունավետության բարձրացմանը,

- տնտեսավարման սոցիալական պատասխանատվության ինստիտուտի կայացմանը,
- IFRS-S ստանդարտներին համապատասխան և գործարարության կայուն զարգացման չափանիշներին համահունչ ֆինանսական արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների կազմմանը:

Այսպիսով, ատենախոսության թեմայի արդիականությունն աշխատանքում հիմնավորված է ինչպես ՀՀ արտադրական կազմակերպություններում ֆինանսական արդյունքների բյուջետավորման համար անհրաժեշտ մոտեցումների մշակմամբ, այնպես էլ՝ հաշվետվողականության հնարավորությունների ընդլայնմամբ և դրա համալիրության անստիճանի բարձրացմամբ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսական ուսումնասիրության հիմնական նպատակը ՀՀ արտադրական կազմակերպություններում եկամուտների ու ծախսերի համադրմամբ՝ ֆինանսական արդյունքների բյուջետավորման, հաշվառման և վերահսկողական ժամանակակից համակարգերի ներդրման հիմնախնդիրների բացահայտումն ու հետազոտումն է և դրանց լուծման ուղղությամբ առաջարկությունների ու մոտեցումների մշակումն է:

Ելնելով հետազոտության նպատակից՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- մշակել արտադրական կազմակերպությունների եկամուտների ու ծախսերի հաշվետվողականության մեխանիզմ՝ ներառելով բյուջետավորման բաղադրիչը,
- ուսումնասիրել և առաջադրել բարելավման ուղիներ եկամուտներից ու ծախսերից ձևավորվող ֆինանսական արդյունքների գծով պատասխանատվության համակարգը,
- գործարարության մոդելի ողջ արժեշղթայի կտրվածքով մշակել պատասխանատվության կենտրոններով ֆինանսական արդյունքների տեղեկատվական հոսքերի վերահսկողության մեխանիզմ,
- մշակել կազմակերպությունների եկամուտների ու ծախսերի բյուջետավորմամբ պայմանավորված արդյունքների հիմնավորվածության գնահատման մոտեցում,
- արտադրական կազմակերպությունների ֆինանսական արդյունքների բյուջետավորման շրջանակներում մշակել ինտեգրացված հաշվետվություն կազմելու կառուցակարգ,
- ուսումնասիրել կազմակերպությունների ստանձնած սոցիալական պատասխանատվության պարտավորությունները՝ առաջարկելով դրանց առարկայականության բարձրացման նոր մոտեցումներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության հիմնական գիտական նորույթը կայանում է հետևյալում.

- մշակվել է արտադրական կազմակերպությունների եկամուտների և ծախսերի հաշվետվողականության կառուցակարգ՝ բյուջետավորման բաղադրիչի ներառմամբ:
- արտադրական կազմակերպություններում եկամուտների ու ծախսերի բյուջետավորման համատեքստում մշակվել է հաշվետվությունների ինտեգրման մոտեցում՝ ֆինանսական արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ձևավորելով IFRS-S ստանդարտներին և գործարարության կայուն զարգացման չափանիշներին համապատասխան,
- առաջարկվել է եկամուտների ու ծախսերի բյուջետավորմամբ պայմանավորված արդյունքների մշտադիտարկման այլընտրանքային մոտեցում՝ հիմնված նախահաշիվներից շեղումների կառավարչական հաշվառման տեղեկատվության գնահատման և վերահսկողության վրա,
- մշակվել է կազմակերպությունների կորպորատիվ սոցիալական պատասխանատվության պարտավորությունների կատարման համաթիվ, որը թույլ կտա վերլուծելու և գնահատելու կայուն զարգացման ֆինանսական և ոչ ֆինանսական արդյունքները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ դրանում իրականացված վերլուծությունները, ներկայացված գիտական և գործնական առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ արտադրական կազմակերպությունների կառավարչական գործառույթների արդյունավետության բարձրացման և արտադրական կազմակերպությունների ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգի կատարելագործմանն ուղղված աշխատանքներում: Ատենախոսությունում ստացված արդյունքների հավաստիությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ աշխատանքում օգտագործված են բացառապես պաշտոնական նյութեր և տվյալներ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 107 էջի վրա՝ առանց հավելվածների:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության առաջին գլխում առկա մոտեցումները, ֆինանսական արդյունքների վերահսկողության շրջանակները, ինչպես նաև դրանց վերաբերյալ

հաշվետվողականության սկզբունքներն ենթարկված են համակողմանի վերլուծության: Այստեղ ուսումնասիրված են նաև արտադրական կազմակերպություններում եկամուտների ու ծախսերի վերահսկողության, հաշվետվողականության իրականացման առանձնահատկությունները, ինչպես նաև առաջարկված են այդ գործառույթների բարելավման ուղիներ:

Երկրորդ գլուխը նվիրված է պատասխանատվության կենտրոններով ֆինանսական արդյունքների բյուջետավորման, եկամուտների և ծախսերի տեղեկատվական համակարգի բարելավման հիմնախնդիրների լուծման ուղիների մշակմանը: Կենտրոններում արձանագրվող ֆինանսական շեղումների հասցեականության ապահովման նկատառումով հեղինակը կրկնակի գրանցման հիմքով առաջարկում է հատուկ հաշիվների և հաշվային թղթակցությունների կառավարչական հաշվառման գործիքակազմ: Ուշագրավ է նաև այն փաստը, որ աշխատանքում բերվում են օրինակներ նոր հայեցակարգի կիրառման, բյուջետավորման հիմնավորվածության և կազմակերպության վերջնական արդյունքների վրա դրանց ազդեցության գնահատման վերաբերյալ:

Աշխատանքի այս բաժնում հեղինակի կողմից առաջարկված է նաև եկամուտների ու ծախսերի բյուջետավորման գործընթացի արդյունքների մշտադիտարկման նոր մոտեցում, որը թույլ է տալիս գնահատել սահմանված ծախսային նախահաշիվների հիմնավորվածությունը:

Վերջին՝ երրորդ գլուխը սկսում է կայուն զարգացման համատեքստում եկամուտների և ծախսերի վերահսկողության ներկայացմամբ: Այստեղ կայուն զարգացման գործառույթների իրականացման տեսանկյունից մշակված են կազմակերպությունների կողմից ֆինանսական արդյունքների վերահսկողության տեղեկատվական համակարգի ձևավորման մեխանիզմներ:

Գլխի հաջորդ բաժնում քննարկվում են շրջանաձև արտադրությունում ֆինանսական արդյունքների հաշվառման և վերահսկողության հիմնահարցերը, ընդ որում, ընթացիկ վիճակի բնութագրմամբ և շրջանաձև արտադրության ֆինանսական արդյունքների գնահատմամբ կանխատեսված են կայուն զարգացման հեռանկարները:

Գլխի վերջում կայուն զարգացման համատեքստում դիտարկված են եկամուտների և ծախսերի հաշվետվողականության բարելավման ուղղությունները՝ առաջարկելով հաշվետվությունների ինտեգրման նոր մոտեցում, որում պահպանված են IFRS-S ստանդարտները և գործարարության կայուն զարգացման չափանիշները:

Ելնելով աշխատանքում ուսումնասիրվող երևույթի տնտեսական կարգավորման միջազգային փորձից, հանրապետությունում դրա ներդրման անհրաժեշտության համար ներկայացված են համապատասխան հիմնավորումներ: Հեղինակը կարևորում է կազմակերպությունների կորպորատիվ սոցիալական

պատասխանատվության կատարողականի գնահատումը, ինչի համար նրա կողմից աշխատանքում մշակված է սոցիալական պատասխանատվության կատարողականի գնահատման համաթիվ:

Ատենախոսության եզրափակիչ մասում ներկայացված են աշխատանքի վերաբերյալ հիմնական եզրակացություններն ու դրանում արված առաջարկությունները: Դրանք վերաբերվում են եկամուտների և ծախսերի բյուջետավորման և վերահսկողության ուղիների բացահայտմանը, բյուջետավորման բաղադրիչի ներառմամբ արտադրական կազմակերպությունների եկամուտների և ծախսերի հաշվետվողականության նոր կառուցակարգի, սոցիալական պատասխանատվության կատարողականի համաթվի, հաշվետվությունների ինտեգրման և եկամուտների ու ծախսերի բյուջետավորման գործընթացի արդյունքների մշտադիտարկման մոտեցումների մշակմանը:

Օգտագործված գրականության ցանկում ներկայացված են ատենախոսությունում օգտագործված աղբյուրները՝ ներառյալ գիտական հոդվածները, միջազգային վերլուծական զեկույցները և վիճակագրական տվյալները:

Հավելվածներում ընդգրկված են լրացուցիչ նյութեր և տվյալներ, որոնք օգտագործվել են ատենախոսության վերլուծությունների և եզրակացությունների համար, ներառյալ աղյուսակներ և վերլուծության արդյունքներ:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հետազոտության հիմնական արդյունք և գիտական նորույթներից մեկը կայուն զարգացման համատեքստում ՀՀ արտադրական կազմակերպություններում եկամուտների ու ծախսերի բյուջետավորման, հաշվառման և վերահսկողության մոտեցումների մշակումն է: Սակայն, բյուջետավորման բաղադրիչի ներառմամբ արտադրական կազմակերպությունների եկամուտների և ծախսերի հաշվետվողականության կառուցակարգում բացահայտված չէ դրա կապը կայուն զարգացման հիմնախնդիրների հետ:
2. Գիտական նորույթի երկրորդ կետում նշելով հաշվետվությունների ինտեգրման մոտեցման մշակման մասին, հեղինակը միևնույն ժամանակ չի բնութագրում ինտերգրման աստիճանը՝ արդյոք դա միասնական հաշվետվություն է, թե՝ առանձին բաժիններով կամ ծանոթագրությունների մակարդակով ներկայացվող ձևաչափ: Բացի այդ, կայուն զարգացման չափանիշներ ասելով չի հստակեցվում, թե որ չափանիշների մասին է խոսքը:
3. Հեղինակը առաջ է քաշում կայուն զարգացման հաշվետվողականության, դրա կազմման ու ներկայացման գաղափար, սակայն արդյունավետության տեսանկյունից անհրաժեշտ է նաև անդրադառնալ այդ գաղափարի հետ կապված լրացուցիչ մարդկային ու տեխնիկական ռեսուրսների, ինչպես նաև նոր գործիքակազմի ներդրման ծախսերի գնահատմանը:

4. Թեմայի անվանման և ուսումնասիրության առարկայի դիտակետից ցանկալի կլիներ, եթե աշխատանքում իրականացվեր բյուջետավորման և ընդհանուր գործարարության պլանավորման հասկացությունների համամատական վերլուծություն՝ նկարագրելով դրանց բովանդակային կողմերը գործարարության կառավարման և կառավարչական հաշվառման առանձնահատկությունների տեսանկյուններից:
5. Հեղինակի կողմից մշակված է կազմակերպությունների կորպորատիվ սոցիալական պատասխանատվության կատարողականի համաթիվ, որը հնարավորություն է ընձեռում վերլուծելու կայուն զարգացման ֆինանսական և ոչ ֆինանսական արդյունքները: Սակայն, դրա կիրառական նշանակությունն ավելի կմեծանար, եթե հեղինակն այն օգտագործեր ոչ միայն ստատիկ, այլ նաև դինամիկ գնահատման տեսանկյունից: Համաթիվն աշխատանքում ներկայացված է որպես ընդհանուր կորպորատիվ պատասխանատվության աստիճանի գնահատում, սակայն ատենախոսությունը կշահեր, եթե նույն մոտեցումը դիտարկվեր նաև ESG համակարգի բոլոր տարրերի՝ շրջակա միջավայրի, սոցիալական, ինչպես նաև կազմակերպության կառավարման յուրաքանչյուր գործոնի գնահատման առումով:
6. Հեղինակի կողմից որպես գիտական նորույթ ներկայացրել է արտադրական կազմակերպությունների եկամուտների և ծախսերի հաշվետվողականության կառուցակարգի մշակումը՝ բյուջետավորման բաղադրիչի ներառմամբ: Անհրաժեշտ է նշել, որ աշխատանքում բավարար խորությամբ ներկայացված չէ կառուցակարգը և առանձնահատկությունները: Ավելացնենք նաև, որ եկամուտների և ծախսերի բյուջետավորումը կազմակերպություններում իրականացվում է իր նպատակներին և քաղաքականությանը համահունչ:
7. Հեղինակը որպես գիտական նորույթ առաջարկել է եկամուտների ու ծախսերի բյուջետավորման գործընթացի արդյունքների մշտադիտարկման այլընտրանքային մոտեցում՝ հիմնված նախահաշիվներից շեղումների կառավարչական հաշվառման տեղեկատվության գնահատման և վերահսկողության վրա: Կարծում ենք, վերոգրյալը ներկայացնել որպես գիտական նորույթ կասկածելի է, քանզի կազմակերպություններն արդեն իսկ կիրառում են նշված մոտեցումը իրենց վերահսկողական գործառույթներում, նույնիսկ առավել դետալացված, քան ներկայացված է հեղինակի կողմից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քնարիկ Հրահատի Խաչատրյանի «Եկամուտների և ծախսերի բյուջետավորման և վերահսկողության բարելավումը ՀՀ արտադրական կազմակերպություններում» թեմայով ատենախոսությունն ինքնուրույն հետազոտություն է, որտեղ դրվել և լուծվել են ՀՀ արտադրական կազմակերպությունների բյուջետավորման և

վերահսկողության կատարելագործման տեսական և գործնական կարևոր խնդիրներ:

Սեղմագիրը կազմված է ՀՀ ԲԿԳԿ-ի պահանջներով և համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը, արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Ատենախոսության սեղմագրում և հեղինակի հրատարակած գիտական յոթ հոդվածներում, որպես գիտական նորույթ ներկայացված դրույթները ստացել են իրենց լուսաբանումը:

Հետևաբար, **«Եկամուտների և ծախսերի բյուջետավորման և վերահսկողության բարելավումը ՀՀ արտադրական կազմակերպություններում»** թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը բավարարում է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններին «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման» 6-րդ և 7-րդ կետերի և ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ **Քնարիկ Հրահատի Խաչատրյանը** արժանի է տնտեսագիտության թեկանծուի գիտական աստիճանի շնորհմանը:

Առաջատար կազմակերպության կարծիքը քննարկվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Ֆինանսահաշվային ամբիոնի 19.12.2024 թ.-ին կայացած նիստում (արձանագրություն թիվ 6):

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման Ֆակուլտետի Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ.՝ **Գ.Է.Սահակյան**

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման Ֆակուլտետի Ֆինանսահաշվային ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ.՝ **Վ.Բ.Բոստանջյան**

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման Ֆակուլտետի Ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.՝ **Գ.Մ.Մնացականյան**

Գ. Սահակյանի, Վ.Բ.Բոստանջյանի և Գ. Մնացականյանի ստորագրությունները հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝ **Մ. Հ. Հովհաննիսյան**

24.12.24թ.